Արձանագրություն N 4

ՀԾԿՀ-19/5-ԳՀԾՁԲ ծածկագրով էլեկտրոնային ձևով գնանշման հարցման միջոցով ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

27 նոյեմբերի 2019թ.
ժամը 11:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լիլիթ Մկրտչյանը, անդամներ՝ Ջուլիետա Բաբայանը, Մեսրոպ Ղարիբյանը, Անուշ Սմբատյանը, Նունե Գաբրիելյանը և քարտուղար՝ Էդգար Շադյանը:

Օրակարգ
ՀՀ ֆինանսների նախարարության տրամադրված պարզաբանման և անհամապատասխանությունների շտկման մասին

ՀԾԿՀ-19/5-ԳՀԾՁԲ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լիլիթ Մկրտչյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը 26.11.2019թ. տրամադրել է պարզաբանում, համաձայն որի ՀՀ ֆինանսների նախարարի 25.11.2019թ. 647-Ա հրամանի համաձայն «Գարանտ Աուդիտ» ՍՊԸ-ն վերականգնվել է հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկում՝ դրանից հանելու օրվանից (07.11.2019թ.):

Հանձնաժողովը, ուսումնասիրելով առաջին տեղ զբաղեցնող մասնակցի կողմից ներկայացված՝ հրավերով սահմանված փաստաթղթերը, արձանագրեց հետևյալ անհամապատասխանությունները .

- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն արձանագրվել է ժամկետանց պարտավորություններ,
- Մասնակցի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը կնքվքած չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ,
- Ներկայացված 3.2 հավելվածում տեքստն ամբողջական չէ:

Ելնելով վերոնշյալից՝ հանձնաժողովը որոշեց «Գարանտ Աուդիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտերում արձանագրված անհամապատասխանությունների հետ կապված կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և ծանուցել մասնակցին՝ առաջարկելով ներկայացնել շտկված փաստաթղթերը և ժամկետանց պարտավորության գումարի վճարումը հավաստող փաստաթուղթ:

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2019 թվականի նոյեմբերի 28-ին, ժամը 11:00-ին, ՀՀ ք. Երևան, Սարյան 22 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Լիլիթ Մկրտչյան

անդամներ _____ Ջուլիետա Բաբայան

_____ Մեսրոպ Ղարիբյան

Նունե Գաբրիելյան

Անուշ Սմբատյան

քարտուղար Էդգար Շադյան